Առաջարկներ Ներկայացնելու Հրավեր (ԱՆՀ)

Երկիրը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Ծրագրի անվանումը՝ **Ոռոգման համակարգերի բարելավման ծրագիր (ՈՀԲԾ)**
ՎԶՄԲ փոխառության No.՝ **8267AM**
Պայմանագրի անվանումը՝ **«Արգինա և Սարալանջ ջրհան կայանների հեռացնող ջրանցքների վերականգնում»**
Պայմանագիր No.՝ **ISEP/NCB/CW-15/002**

1. Հայաստանի Հանրապետությունը ֆինանսավորում է ստացել ՀԲ-ից՝ «Ոռոգման համակարգերի բարելավման ծրագրի» ծախսերը հոգալու նպատակով և մտադիր է այդ միջոցների մի մասն օգտագործել **«Արգինա և Սարալանջ ջրհան կայանների հեռացնող ջրանցքների վերականգնում» ISEP/NCB/CW-15/002** պայմանագրի շրջանակներում վճարումներ կատարելու համար: Այս պայմանագրի վճարումները իրականացվելու են Համաշխարհային բանկի և ՀՀ կառավարության համատեղ ֆինանսավորմամբ: Մրցութային գործընթացը ղեկավարվելու է ՀԲ-ի կանոններով և ընթացակարգերով:

2. **«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ն (ՋՏԾԻԳ ՊՀ)** հրավիրում է մրցույթի իրավասու մասնակիցներին փակ մրցութային առաջարկներ ներկայացնել հետևյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու համար՝ հողային աշխատանքներ, միաձույլ բետոնի, միաձույլ երկաթբետոնի, հավաքովի երկաթբետոնի աշխատանքներ, խողովակներ և խողովակաշարային սարքեր, մետաղական կոնստրուկցիաներ, մեկուսացման աշխատանքներ և այլ աշխատանքներ:

Շինհրապարակները գտնվում են.
- Արգինա ջրհան կայանի հեռացնող ջրանցքի աջ և ձախ ճյուղերի շինարարական հրապարակը գտնվում է Երևան քաղաքից մոտ 85կմ հեռավորության վրա, իսկ Արգինա համայնքից՝ 5կմ:
- Սարալանջի ջրհան կայանի հեռացնող ջրանցքների շինարարական հրապարակը գտնվում է Երևանից մոտ 83կմ հեռավորության վրա, իսկ Արեգ համայնքից՝ 3կմ:

Աշխատանքների տևողությունը՝ **18 (տասնութ) ամիս է** (2015թ. մայիսի վերջից մինչև 2016թ. նոյեմբերի վերջը՝ ներառյալ վեգետացիոն ժամանակաշրջանը):

Հիմնական որակավորման չափանիշներն են.

- Միջին տարեկան շրջանառությունը շինարարության գծով պետք է կազմի **575,000,000 ՀՀ դրամ** հաշվարկված որպես վերջին 3 (երեք) տարիների ժամանակահատվածում շարունակվող և/կամ ավարտված պայմանագրերով ստացված վճարումների ընդհանուր գումար, բաժանած 3-ի;
- Մրցույթի մասնակիցը պետք է ցույց տա, որ նա կարող է ստանալ, կամ նրա համար մատչելի են իրացվելի ակտիվներ, չգրավադրված անշարժ գույք, վարկային գծեր կամ այլ ֆինանսական միջոցներ (սակայն ոչ որևէ պայմանագրով ստացված կանխավճար), որոնք բավարար են շինարարության ընթացքում կանխիկ դրամի հետևյալ հոսքերն ապահովելու համար. **128,000,000 ՀՀ դրամ**՝ հանած մրցույթի մասնակցի այլ պարտավորությունները;
- 2010թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում, մասնակցություն որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկման անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու՝ գոհացուցիչ կերպով և էապես ավարտված առնվազն 1 (մեկ) ջրաշինարարական աշխատանքների պայմանագրում (օրինակ՝ պատվար, ջրառ հանգույց, մայր և

երկրորդ կարգի ջրանցքներ, ջրագծեր), որի արժեքը լինի առնվազն **460,000,000 ՀՀ դրամ**;

- Վերոհիշյալ կամ այլ ավարտված պայմանագրերում, կամ այլ իրականացվող պայմանագրերում, 2010թ. հունվարի 1-ից մինչև մրցութային առաջարկի ներկայացման վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածում՝ մասնակցություն որպես գլխավոր կապալառու, համատեղ ձեռնարկման անդամ, կառավարման կապալառու կամ ենթակապալառու, հետևյալ հիմնական աշխատանքների նվազագույն ծավալի հաջող ավարտման փորձով. **հիդրոտեխնիկական մոնոլիտ և երկաթբետոնային աշխատանքներ՝ 3,100մ^3** (վերը նշված ժամանակահատվածում որևէ մեկ տարվա ընթացքում):

Պահանջվող հիմնական աշխատանքների ծավալը կարող են ցույց տրվել մեկ կամ մի քանի պայմանագրեր միավորելու միջոցով (առավելագույնը երեք), եթե դրանք իրականացվել են նույն ժամանակահատվածում:

Իրավասու տեղական կապալառուներին/համատեղ ձեռնարկումներին նախապատվություն **չի տրվելու:**

3. Մրցույթն անց է կացվելու **Ազգային մրցութային սակարկությունների (ԱՄՍ)** ընթացակարգի համաձայն, որը սահմանված է Համաշխարհային Բանկի ուղեցույցներում՝ «Ապրանքների, աշխատանքների, և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՁՎՄԲ-ի փոխառությունների և ՄՁԸ-ի վարկերի ու դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային բանկի փոխառուների կողմից» (2011թ. հունվար, վերանայված՝ 2014թ. հուլիսին): Մրցույթը բաց է մրցութային փաստաթղթերով սահմանված բոլոր իրավասու մասնակիցների համար: Ի լրումն, խնդրում ենք ուշադրություն դարձնել 1.6 և 1.7 կետերի վրա, որով սահմանվում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Մրցույթի շահագրգիռ իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ ՁՏԾԻԳ ՊՀ-ից (պրն.Սամվել Կարապետյան – Պլանավորման և նախագծման ճարտարագետ, հեռ. (+37441) 111-402, էլ.փոստ: skarapetyan@wsdp.am) և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը ներքո նշյալ հասցեով՝ աշխատանքային օրերին ժամը 10:00-ից մինչև 17:00 (երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ):

5. Շահագրգիռ մասնակիցները կարող են ձեռք բերել մրցութային փաստաթղթերի ամբողջական փաթեթը **հայերեն լեզվով**, ներկայացնելով գրավոր դիմում ներքոհիշյալ հասցեով և վճարելով **40,000 ՀՀ դրամ** չհատուցվող գումար: Նշված գումարի վճարման եղանակն է բանկային փոխանցումը հետևյալ հաշվին.
Շահառու. ՀՀ ֆինանսների նախարարություն/կենտրոնական գանձապետարան
Հաշվի համար. 900000906082 (ՀՀԴ)

Մրցութային փաստաթղթերը կտրամադրվեն մրցույթի մասնակիցներին նաև էլեկտրոնային տարբերակով: Տպված և էլեկտրոնային տարբերակների միջև հակասությունների դեպքում տված տարբերակը գերակայում է:

6. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով **2015թ. ապրիլի 23-ին ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով)** կամ ավելի վաղ: Էլեկտրոնային եղանակով մրցութային առաջարկների ներկայացում չի թույլատրվում: Ուշացված մրցութային առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները կբացվեն բացմանը մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցների ներկայացուցիչների ներկայությամբ **2015թ.ապրիլի 23-ին ժամը 16:00-ին (Երևանի ժամանակով)** ներքո նշված հասցեում:

7. Մրցութային առաջարկները պետք է ուղեկցվեն Մրցութային առաջարկի երաշխիքով (բանկային երաշխիք), որի գումարն է. **11,500,000 ՀՀ դրամ**:

8. Վերևում հիշատակվող հասցեն է.
«Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ
Պրն. Ֆելիքս Մելիքյան, տնօրենի պաշտոնակատար
Պրն. Մարտին Չարյան, գնումների մասնագետ
ՀՀ, Երևան 0033, Բաղրամյան 75/44
Հեռ՝ (+37410) 277-943 (ընդունարան), 266-058 (գնումների բաժին)
էլ. փոստ՝ fmelikyan@wsdp.am, mcharyan@wsdp.am